

Ապրող Էջեր

ՎԱՆԵՐ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԻՋԵԻ

Մայրը Օուէն Ուիլիամսի 1919 «National Geographic» ամսագրի Օգոստոս համարում տպագրում յօդուածը

Գործողութեան վայրը՝ Վան, պատմական Հայաստանի մայրաքաղաք, որի ապացոյցները նուաճող-բազալտոնների՝ բարձր պատերի վրայ բողոմած արձանագրութիւններն են: Ողբերգութեան հետքերը տեսանելի են իւրաքանչիւր անտրուած տան վրայ, եւ սակայն, հեռուտը անցնելով դեռեւս պահպանում է իր ճնշող հմայքը: Չափ կողմում, այսինքն հարաւարեւմտորում, ծինամածկ լեռների կախարական շրթան Հայաստանը բաժանում է Տիգրիսի հովտից:

Մեր առջեւ Վան լճի սրահայտի ծիւղերն է՝ Նեմրոյթ լեռան խառնարանածու գագաթի հետ միասին, որը բառատուն մղոն հեռուից մշուշոտ է երևում: Մի քիչ հիւսիս՝ Միփանի նրբազարդ գագաթն է, որտեղ Նոյի տապանը սկզբից փնտռեց հանգրուան, սակայն այդ պէտքեր գագաթը ստիպում էր այդ պատիւր գիշել միսին՝ աւելի հզօրին, որը աւելի հիւսիս էր՝ Արարատին: Մուգ շագանակագոյն ժայռերը հատում է ծինակապտ տարածքը, այստեղով է անցնում նահանջի ուղին՝ ճանապարհի դէպի Մահացու Ստուերների Հովիտը:

Իմ պարտականութիւնների մէջ մըտնում էր հրդեհուած տների մնացորդներից բարաքների կառուցումը, տներ, որտեղ ոչ այնքան վաղուց մետաքսեայ վարագոյրներն ու ընտիր գորգերը հաղորդում էին արեւելեան ճոխութեան պայքը շքեղ տների եւ այգիների բաղաձիւն եւ որտեղ հպարտ հայ կանայք իրենց ձեռքի շախատանքով էին վաստակում իրենց ապրուստը:

Մի հակալական տան մէջ, ուր շատ մարդիկ էին հաւարուել, վարպետները դուռ ու լուսամուտ էին տեղադրում, որպէսզի այդ ողորմելի կացարանը դառնայ պիտանի ապրելու համար: Մաքրում, լուսացում ու սանրում էին տունները՝ բոլորը: Դա անհրաժեշտ էր հագուստ գործելու համար, որպէսզի տկարացած կանայք պաշտպանուեն ցրտից:

Ամերիկեան օգնութեան միութիւնը աշխատում է այստեղ, որտեղ ապագայ խաղաղութեան յոյսը բթացնում է տանջալից ցարը, որտեղ ոտաբոյսի երեխաները դժուարութեամբ են անցնում սառած ձիւն միջոցով, ժպտալով թափառաբերով փոքրիկ սեւագուլ կարասները, որով նրանք յոյս ունեն գտնելու մի քիչ ջրայի ճաշ, որպէսզի բարբախեն սեւ հացը, կերակուր, որից կախում է նրանց կեանքը:

Մենք նահանգապետի հետ լաւ բարեկամներ ենք: Երիտասարդ տարիներին նա Պատանում աշխատել է վերելակավար եւ այնտեղ էլ իր բարեացական յանձնարարողներից սովորել է անգլերեն լեզու:

Այսույեւտ նրա պարտականութիւնների մէջ է մտնում դեկավարել այստեղ հաւարած դժբախտ հայերին այնքան ժամանակ, մինչեւ որ պատերազմը կ'աւարտուի միացնել տէրութիւնների յաղթանակով եւ վերջապէս խաղաղութիւն կ'իջնի այս թանկագին հողին:

Ի՞նչ անգամ աշխատանքից տուն վերադառնալու ճանապարհին, մի համեստ կառուցել տան մօտ, որը յատկացում էր նահանգապետական կառավարմանը, մեզ շրջապատեց ուրիշ տաս տարեկան տղաների մի խումբ:

Նահանգապետը ամենայն լրջութեամբ ողջունեց տղաներին եւ յատկապէս արժանավայել կեցուածք ընդունած հրամանատարին եւ հարցրեց.

- Ի՞նչ կարող է անել նահանգապետը իր հաւատարիմ քաղաքացիների համար:

- Մենք եկել ենք մեր փայտեայ հրացանները փոխելու իսկականներով: Մենք ուզում ենք պաշտպանել մեր հայրենիքը:

- Մեզ մօտ գէների մեծ պահանջ կայ, տղաներ, - սասց նահանգապետը, - մենք գէներ կու տանք միայն նրանց, ովքեր կարող են հրամաններ կատարել դիրքերում: Ամիջապէս հետեւեց պատասխանը.

- Մենք դա կարող ենք անել: Հոգեւորով ծանրաբեռնուած մարդու աչքերը մի պահ կը կկոցուեցին ինչ որ անսպասելի յայտարարեց, բայց.

- Եկէք տեսնենք, ի՞նչ կարող էր անել: Տասներկուամեայ առաջնորդը կարող հրաման արձակեց եւ քսանութ փայտեայ հրացան, կտրուած թեթեւ տախտակներից, խուլ ձայնով հպուեցին սառած դէմքերին: Նորից, հրամանի համաձայն կատարուեցին «գէներ ուսին», «ուղղել սուրիները» հրամանները: Ժպիտի ստուեր անգամ չերեւաց նրանց մանկական դէմքերին:

Յետոյ անմշակ կաշուից կարուած

չարոխներով (այնպէս, ինչպէս յօդուածի հեղինակին է), նրանք բառաշարք բայցեցին առաջ ու ետ: Չհնուրական ծառայութեան այդպիսի խաղը մեծահասակներին ստիպում է ժպտալ, չնայած, որ կոկորդը սեղմում է պատերազմող մեծահասակների մանկական այդ ընդօրինակումից:



Եւ այն էլ, որ այդ երեխաների մեծ մասի հայրերին սպանել էին վերջերս, իսկ շատ մայրեր ինքնասպանութիւն էին գործել՝ քրտերի պղծութիւններից զոհ չգնալու համար:

Նահանգապետը խորապէս յուզուած էր:

- Որտե՞ղ էք ապրում, - հարցրեց նա, կարծելով, որ նրանք եկել են քաղաքի մօտակայ քաղաքներից:

- Մենք եկել ենք Արտամէտից, - լսուեց անսպասելի պատասխանը:

Խօսքը գնում էր վեց մղոն հեռու, լճի ափին գտնուող գիւղի մասին, թրքական դիրքերի ուղղութեամբ:

Մէկ օր առաջ սաստիկ ձիւն էր եկել եւ հիմա արդէն ստուերները երկարում էին: Նոյնիսկ ուժեղ տղամարդու համար դրժուար էր իրիկնապահին վերադառնալ Արտամէտ: Դրա համար էլ նահանգապետ Համբարձումեանը մեզ՝ երիտասարդ հրամանատարի հետ, հրապարակաբար, որի արդիւնքում տղաներին տրուեց զինտրական ընթրիք՝ մի բաժին սեւ հաց եւ շաքարով թէյ: Նրանց տրուեց նաեւ քաղաքային կաշապուած գիշերելու տեղ:

Երեխաները, սակայն հրաժարուեցին վերադառնալ այնքան ժամանակ, մինչեւ հրացան չստանան:

Հումանիտար օգնութիւնը, դա ոչ միայն ստամոքսի հարց է, այլեւ բարոյականութեան: Առաւօտեան իմ աւագ հիւսնը լաւագոյն տախտակներից, որը մենք կարողացանք գտնել, պատրաստեց թուր, ի հարկէ, աշխատելով այն մնացեցին Սալատիին կեռ թրին: Այդ ընթացքում երեխաները ծանօթացան տարբեր արտադրութիւնների հետ, որ կազմակերպել էր ամերիկեան հումանիտար օգնութիւնը, եւ նրանցից իւրաքանչիւրը ստացաւ մէկական գոյգ բրդեայ գուլպայ: Այնուհետեւ տղաները գգաստ շաքր կանգնեցին մեր տան տափակ կտորին: Այնուտեղ, քաղաքի երիտասարդ պարտեղ՝ Հայաստանում յայտնի բանաստեղծի որդին, ամենայն հանդիսատրութեամբ դասակի հրամանատարին յանձնեց թուրը: Դրա փայտեայ բնութիւնը չէր կարող թաքցնել այն գծերը, որոնք արցունքն ու ժպիտը աչքերին, պատրաստել էր հմուտ հիւսնը՝ ներդնելով իր հոգու ամբողջ կարողութիւնը:

- Այս անգամ մենք կարող ենք թուր տալ միայն ձեր հրամանատարին, - սասց նահանգապետը, որը թողել էր կարեւոր խորհրդատուորով, որպէսզի հրաժեշտ տայ երեխաներին:

- Բայց ես ցանկանում եմ, որ դուր լինէր կարգապահ եւ շարունակէք մարգուել, կարող է գալ այն օրը, ձեր օգնութիւնը մեզ հարկաւոր լինի: Հրամանատար, ձեր միութիւնը պահէր կազմ ու պատրաստ վիճակում, որպէսզի մեր երկիրը կարողանայ ձեզ կանչել հայրենիքի հանդէպ պարտքը կատարելու:

- Մենք կը լինենք պատրաստ, - պատասխանեց նոր թրի հայտար տիրակալը:

- Չգա՛տ: Ըարք աչ դա՛րձ, քայլով մարշ:

Եւ Արտամէտի կամարական բանակը հպարտ ճամբայ ընկաւ դէպի իր հեռատր գիւղ, որից ամփսնը անց բրբալան հորդաները եկան իրականացնելու Վանի կոտորածը:

Յօդուածը ռուսերենից բարգմանեց եւ համարեց՝ Ն. ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՒՐՈՆՆԵՐ ԿԸ ԳՐԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ. ԻՆՉ ԿԸ ՎՃԱՐԵՍ, ԱՆ ԿԸ ՍՏԱՆԱՍ

Ուաշինկթընի մէջ գտնուող իշխանաւոր վերլուծական շարք մը կերտողներ, ինչպէս՝ ռազմավարական եւ միջազգային ուսումնասիրութիւններու կերտողներ, Ազգային ապահովական հարցերու հրեական հիմնարկը, «Քար-նկղի Եւստուրմընթ Ֆոր Ինթըրնաշնըլ Փիւս»-ը, «Պրու-քինկզ» հիմնարկութիւնը, «Յերթթէյն» հիմնարկը, Արտաքին յարաբերութիւններու խորհուրդը եւ «Ամերիքըն Եւթըրփրայզ Ինսթիթիւթը»-ը, վերջերս հրատարակած են շարք մը յատուկ տեղեկագրութիւններ, որոնք կը նպատակադրեն ամերիկացի քաղաքականութիւն կերտողներուն վրայ ազդեցութիւն բանեցնել՝ ի նպաստ Թուրքիոյ:

Այդ կողմակալ տեղեկագրութիւններուն նորագոյնը՝ «Թուրքիա եւ Հայաստան. Կը Բանան Միտքերը, Կը Բանան Սահմանները» խորագիրով, հրատարակուեցաւ 14 Ապրիլին, Տազնայի միջազգային խումբի նախնի կողմէ: Տազնայի միջազգային խումբի նախնի խնամակալութեան մէջ կը ծառայեն Թուրքիոյ մէջ Միացեալ Նահանգներու նախկին դեսպան Սորթըն Ապրամովիթը, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի նախկին փոխնորդ եւ Միացեալ Նահանգներու Առեւտրական սենեակի խորհրդատուներու պատուաւոր խորհուրդի անդամ Ռիչըրտ Արմիթէյն, նախագահի Ազգային ապահովութեան նախկին խորհրդակալ եւ Միացեալ Նահանգներու Առեւտրական սենեակի խորհրդատուներու պատուաւոր խորհուրդի անդամ Չափկնիու Պըրթեգիսկի, Թուրքիոյ «Սապանճի Հոլտիկ»-ի ատենապետ Կիւլտը Սապանճի, ինչպէս նաեւ Միացեալ Նահանգներու նախկին գոնկրետական եւ Թուրքիոյ ի նպաստ լոպպիսիսի աշխատակց տանող Սթեֆըն Սոլարեզ: Տազնայի միջազգային խումբի աւագ խորհրդակալներուն շարքին են Թուրքիոյ խորհրդարանի անդամ Երսիկ Արիօղլուն եւ Իսրայէլի նախագահ Շիմոն Փերեզ: Չարմանակի չէ, որ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը Տազնայի միջազգային խումբի մեծագոյն նախարարներն է: Ոչ մէկ հայ կը գործէ Տազնայի միջազգային խումբի նախնի խնամակալութեան կամ անոր խորհրդատուական մարմիններէն որեւէ մէկուն մէջ:

Խումբի կողմէ հրապարակուած քառասուն էջնոց տեղեկագիրը կը ներկայացնէ անընդունելի առաջարկներ, որոնք չափազանց վնասակար են Հայաստանի շահերուն: Տազնայի միջազգային խումբը հետեւեալները կ'առաջարկէ Հայաստանի կառավարութեան.

1. Թուրքիոյ հետ կազմել երկկողմանի յանձնաժողովներ, որոնք շարքին նաեւ՝ պատմական յանձնաժողով մը Հայկական Յեղասպանութեան վերաբերեալ:
2. Հանրային կարծիքը պատրաստել Թուրքիոյ հետ հաշտութեան նկիւղով:
3. Խուսափիլ ցեղասպանութեան ճանաչման հետ առնչուող յայտարարութիւններէ կամ միջազգային քայլերէ, որոնք կրնան բորբոքել Թուրքիոյ հանրային կարծիքը ընդդէմ ներկայի (հաշտութեան) գործընթացին:
4. Սկսիլ քաշուելու Արաբիանի մէջ հայկական գրաման տակ եղող շրջաններէ, եւ Արաբիանի հետ խաղաղութեան հետամուտ ըլլալ՝ այն ամբողջական գիտակցութեամբ, թէ միայն այդ ձեւով է, որ կարելի է յարաբերութիւններու բնականացում ձեռք ձգել Թուրքիոյ հետ:

Հարցազոյց ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՐՆԱՆՔ ԱԿՐՏԵԼ ԳՈՐԱ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԹԱՅՔԻՆ ԿԸՍԵ ՄԻՋԱԾԳԱՅԻՆ ԱՏԵԱՆԻՆ ՆԱԽԱԳԱՐԸ

Լիբանանեան «Ախպար» օրաթերթը հարցազոյց մը ունեցած է միջազգային ատենակի նախագահ Անթոնիո Քանգիին հետ, որուն խօսքերուն գլխատր կէտերը բարգմանաբար կը ներկայացնենք մեր ընթերցողներուն.

- Արդարութիւնը հիմն է. արդարութիւնը չի կրնար պատահական ըլլալ: Համաձայն էր: = Այո: - 2006 թուականին սպաննուեցան 1300 լիբանանցիներ, որոնք պիտի չուներն իրենց համար միջազգային դատարան մը: Մինչ մէկ մարդ զոհ գնաց ահաբեկումի գործողութեան եւ իրեն համար կազմուած է միջազգային ատենա՛ մը: = Ես համամիտ եմ հետդ. սակայն այս է քաղաքականութիւնը, պէտք է այլապէս Նիւ Եորքի քաղաքագետները, որոնք կ'որոշեն Կազայի եւ Հարաւային Լիբանանի ոճիրներուն գծով որեւէ միջոցառում չորդեպէս, իսկ (Լիբանանի նախկին վարչապետ) Ռաֆիք Հարիրիի ահաբեկման պարագային կ'որոշեն միջոցառումներ որդերգել. այս է քաղաքականութիւնը: Մեզ մի այլապէս. մենք քաղաքականութեան դուրս ենք: Մենք արհեստավարներ ենք, եւ մեզմէ պահանջուեցաւ որոշ հարցի մը շուրջ ըմբռնել կատարել: - Նիւ Եորքի քաղաքագետներուն որոշումները դժուարութիւններ կը յարուցանեն՝ ձեզի, իբրեւ արդարութեան իրականացման ձգտող դատարաններ: = Այո, իրաւունքով եւ արդարութիւն՝ բոլորին. սակայն... - Լիբանանի համար ստեղծուած յատուկ ատենակի աշխատանքներուն անցեալ տարի ծախսուեցաւ 51 միլիոն եւ 400 հազար տոլար: Լիբանան պարտաւոր է այս գումարին 49 առ հարիւր վճարել: Իսկ ատենակի գրասենեակներուն համար 20 հազար քառակուսի

5. Յստակ դարձնել թէ Հայաստան հողային պահանջունի Թուրքիայէն՝ բացայայտօրէն ճանչնալով անոր հողային ամբողջականութիւնը, 1921ի Կարսի դաշնագիրով ճշդուած սահմաններուն մէջ: 6. Զաջալերել համալսարանները եւ հիմնարկները, որ յաւելելալ ուսումնասիրութիւններ կատարեն 1915-ին վերաբերող դէպքերուն գծով, նախընտրաբար թուրք եւ երրորդ խումբի ուսումնասիրողներու մասնակցութեամբ. արդիականացնել պատմութեան գիրքերը՝ անոնցմէ հանելով ամէն նախապաշարու. կազմակերպել ցանկազուով հայկական ծանօթ արխիւներուն, որոնք կը վերաբերին 1915-ի ընթացքին եւ այդ ժամանակաշրջանին պատահած դէպքերուն, ուր ալ տեղադրուած ըլլան անոնք:

Տեղեկագիրի գործադիր ամփոփումին առաջին տողերը կը ձգեն այն սխալ տպարարութիւնը, թէ՛ «Թուրքիան եւ Հայաստանը մօտեցած են լուծելու (իրենց) անհամաձայնութիւնը»: Ամէն մարդ, բացի այն մասնագետներէն, որոնք այդ տեղեկագիրը գրեցին, քաջ գիտէ, թէ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ բանակցութիւնները ծախսուած են եւ թէ երկու երկիրներուն միջեւ խնդիրը «անհամաձայնութիւն» մը չէ, այլ՝ գործադրուած Յեղասպանութիւն մը...:

Տեղեկագիրի գործադիր ամփոփումին մէջ կը գտնենք այն գարմանակի հաստատումը այն մասին, թէ Յեղասպանութեան շուրջ հայերուն եւ թուրքերուն տեսակետները «կը զուգամտեմքի»՝ իբրեւ թէ «ցոյց տալով, թէ խորունկ ցաւերը կրնան բուժուիլ»:

Շարունակելով երեսակայական իբրեւ իրականութիւն ներկայացնել՝ տեղեկագիրին անյայտ հեղինակները կը հաստատեն, թէ՛ «Երկկողմանի յարաբերութիւններուն յառաջադրեցող ցոյց կու տայ, որ հաշտութեան փափաքը կրնայ յաղթանարել ինչ թշնամութիւնները եւ փակ սահմանները: Նկատի ունենալով այն աւանդը եւ մշակոյթը, որ հայերն ու թուրքերը կը բաժնեն, շատ պատճառներ կան յուսադրուելու, թէ երկու երկիրներուն միջեւ յարաբերութիւններու բնականացումը իրագործելի է եւ պահելի»:

Տեղեկագիրին մէջ տեղ գտած ամէնէն անընդունելի ակնարկութիւններէն մէկը այն է, որ Սփիւռքի «կարծր կեցուածք ունեցող» ներկայացուցիչները «մեղմացուած են» իրենց կեցուածքը՝ հրաժարելով իրենց այն պահանջէն, թէ՛ «Թուրքիա պէտք է յանձնէ իր հիւսիս արեւելեան հողատարածքը, ուր հայերը նպատակելի թիւով փոքրամասնութիւն մըն էին 1915էն առաջ»:

Տեղեկագիրը կ'ողջունէ նախագահ Օպամայի «խոհեմ միջին ընթացքը», հակառակ այն իրողութեան, որ ան «իր քարոզարշաւին ընթացքին շարունակ խոստացաւ պաշտօնապէս ճանչնալ» Հայկական Յեղասպանութիւնը:

Ամէն ձեւով Թուրքիան հաճեցնելով՝ Տազնայի միջազգային խումբը նաեւ կ'առաջարկէ, որ Միացեալ Նահանգներու Երկայացուցիչներու տունը լքէ Հայկական Յեղասպանութեան վերաբերեալ առկա մնացած օրինակագր:

ՅԱՐՈՒԹ ԱՍՏՈՒՆԵԱՆ («Տը Գալիֆորնիա Գուրիթը»-ի խմբագիր) (Շար.ը տեսնել՝ էջ 4)

եալներու եւ վկաներու թիւին հետ: Խոստումներ չկան ուրեմն: Սակայն, իրողապէս, թերեւս կարելի ըլլայ մեր աշխատանքը աւարտել չորս տարիներու ընթացքին:

- Դատարար Տանիէլ Ֆրանսին չորս սպանները արգելափակելու հրահանգ տուաւ, մինչ ձեռքաւորման հրամանագիր չարձակեց կապաճի տակ գտնուող Մոհամմատ Չուհէր Սատտիքին նկատմամբ, ինչո՞ւ:

= Այո, դատարարը ձեռքաւորման յուշագիր չարձակեց Սատտիքի նկատմամբ: Տեղեկատուութեան միջոցներէն իմացաւ, որ ան կալանաւորուած է Արաբական Միացեալ Էմիրութեանց մէջ: Սակայն դատախազ Տանիէլ Պելմար դատարար Ֆրանսիին չպահանջեց Սատտիքի դէմ ձեռքաւորման յուշագիր արձակել: Ան գիտէ, որ ստիպական իշխանութիւնները անոր դէմ ձեռքաւորման յուշագիր յոյս ընծայած են եւ հաւանաբար ան բաւարարուած ըլլալ:

- Ըսի՛նք, որ թերեւս հետաքրքրուած չէք Սատտիքով, եւ կրնայ ըլլալ որ չէք հետաքրքրուած նաեւ չորս սպաներով: Սակայն վերջիններս ձեռքաւորուած են, մինչ Սատտիքը ազատ է, եւ Ֆրանսինը հրահանգած է արգելափակել սպաները:

= Անոնք ամբաստանուած չեն. պէտք է որ անոնց ճակատագիրը տայինք երկու կամ երեք շաբաթէն: Եթէ ազատ արձակենք, կրնան փախուտ տալ: - Սակայն ընդհանուր դատախազը որեւէ որոշում չտուաւ Սատտիքի մասին...:

= ... (ընդմիջելով) Պէտք է իրենց հարցնեն, մենք դատարարներ կապ չունինք Սատտիքին հետ, անոր լուրերը լսեցինք ձեզմէ կամ տեղեկատուութեան միջոցներէն: